ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության

հաշվարկային բաժնի պետ

Տաթևիկ Ղուկասյան

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Աննիկ Գրիշայի Սավզյանի կողմից 12.01.-12.07.2026 թվականի

կատարած աշխատանքների վերաբերյալ

12.01.-12.07. 2026թ ընթացքում իմ կողմից ք.Երևան Աբովյան 54 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները։

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության բժշկական վարչության 12.01.-12.07.2026թ. ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշռի հաշվետվությունը, նաև դեղորայքի և վիրակապական նյութերի , սոցիալական փաթեթի, կոմունալ ծախսերի, աշխասակիցների թվաքանակի և դրամական բավարարման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների, հիմնական միջոցների, նյութական արժեքների շարժի վերաբերյալ հաշվետվությունները , ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն։

2. Ընդունել եմ բժշկական վարչության աշխատողների ապրիլ, մայիս, հունիս ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատրումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան վճարման ցուցակներ։

3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրեր։
4. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը, անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկ։
5. Ներկայացված հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա կատարել եմ փոխանցումները։ Բժշկական վարչության հաշվից կատարել եմ աշխատավարձի, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխանցումների, սոցիալական վճարի, եկամտային հարկի,դրոշմանիշի, համընդհանուր բժշկական ապահովագրության, դեղորայքի, բժշկական սարքավորումների վերանորոգման, բժշկական սարքավորման վարձակալման, առողջարանային ուղեգրերի ձեռք բերման և այլ վճարումները։

6. Սահմանված ժամկետում կազմել եմ և ներկայացրել եմ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության հաշվարկային բաժին եկամտային հարկի, սոցիալական վճարի, դրոշմանիշի, համընդհանուր բժշկական ապահովագրության 12,01.-12.07.2026թ. ամփոփ հաշվետվությունը:

7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները:

8. Կազմակերպել եմ առողջարանային ուղեգրերի ձեռք բերման աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարության 20.07. 2001թ. թիվ 553-Ն որոշման իրականացնում եմ ՀՀ ՆԳՆ զինծառայողների, քաղծառայողների, կենսաթոշակառուների առողջարանային ուղեգրերի հատկացումը;

9. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Ա.Սավզյան

«30» հուլիսի 2026թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ ______

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության
հաշվարկային բաժնի պետ Տաթևիկ Ղուկասյան

«30» հուլիսի 2026թ.